



ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ

2301, ք. Հրազդան, Կենտրոն, Վարչական շենք, Հեռ. (+374 223) 2 37 13 , Ֆաքս (+374 223) 2 36 63, էլ.փոստ kotayk@mta.gov.am

N _____

ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐԶ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԳԵՂԵՑԿՈՒԹՅԱՆ ՏՈՆԻ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ

Սիրելի՛ կանայք, մայրեր, քույրեր,

Շնորհավորում եմ ձեզ մայրության և գեղեցկության տոնի կապակցությամբ և մաղթում, որ սերը, երջանկությունը մշտապես ուղեկցեն ձեզ և որևէ պարագայում չխամրի ձեր ժպիտն ու գեղեցկությունը:

Առանձնահատուկ ուզում եմ շնորհավորել առողջապահության ոլորտում ծառայող մեր մայրերին ու քույրերին, քանզի այսօրվա մեր հերոսները իրենք են, ովքեր առաջին գծում պայքարում են մարդկության առջև ծառայած մարտահրավերի դեմ՝ գուցե արդեն մեկ ամիս չտեսելով իրենց ընտանիքներին:

Իմացե՛ք, որ դուք մեր ժամանակի հերոսներն եք, քանի որ ի հեճուկս բոլոր դժվարությունների և մարտահրավերների, կնոջը, մորը հարիիր նվիրումով շարունակում եք իրականացնել ձեր աշխատանքը:

Անգնահատելի է ձեր առաքելությունը՝ ուղղված մարդկության փրկությանը և ինքնին մեր ժողովրդի առողջության ու անվտանգության ապահովմանը:

Խոնարհվում եմ ձեր առաջ, սիրելի՛ մայրեր:

Հարգանքով՝

Ռ.Պետրոսյան